ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ
ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՎ ԹԱՐԳՄԱՆԻՉ

Դարեր շարունակ թարգմանության գործողությունը անկանխատեսելի դժվարություններ է հարուցել: Այնուհանդերձ, թարգմանչի աշխատանքը միշտ գնահատվել է, անկախ լեզվաբանների այն խմբավորման, ովքեր պնդում են, թե անհնար է մի լեզվից մյուսը լիարժեք թարգմանություն կատարել: Բայց դարավոր փորձը հակառակն է ապացուցել: Բազում բնագավառներում թարգմանությունը միշտ առկա է եղել մարդկության պատմության մեջ, հատկապես մեր ժամանակներում, երբ գիտությունն ու տեխնիկան, կինոնկարների, լրատվական, հեռուստատեսային միջոցները հսկայական նվաճումներ են ձեռք բերել, երբ բյուրապատկվել են միջազգային հարաբերությունները, վերելք են ապրել գիտելիքների, տեխնիկայի, մշակույթի, արվեստի բնագավառները և ավելի ու ավելի մեծ զարգացում ապրել, իսկ թարգմանության գործոնը նպաստել և խթանել է դրանց առավել զարգացմանը:

Սակայն այս անգամ մեզ առավելապես հետաքրքրում է թարգմանության արվեստի բնագավառը, հատկապես շեշտը դնում ենք պոեզիայի թարգմանության որոշ խնդիրների վրա:

Այդ նպատակով նախ հարևանցիորեն պարզենք, ինչ է պոեզիան, ով է բանաստեղծը և ով է թարգմանիչը, որ վերակերտում է մեկ այլ լեզվով բանաստեղծությունը, ընտրելով իր ճաշակին և նախասիրություններին համապատասխան ստեղծագործություն, այլապես, առանց այս գործոնի, արդյունքը անբավարար է: Թարգմանիչը, երբ հասնում է այն կետին, որ բնագրին համարժեք գործ է ստեղծում, համակվում է նույն զգացումով, ինչ բանաստեղծը, որ իր աշխարհն է բացահայտում պոեզիայի միջոցով, թարգմանիչը նույն բերկրանքն է զգում՝ բացահայտելով ընդունող լեզվում հաջողությամբ պսակված իր ջանքերը, բնագրին արժանի և հավասարազոր գործ վերակերտելով, հեղինակի աշխարհը բացահայտելով, ապահովելով նաև հեղինակի կիրառած գեղարվեստական միջոցները, փոխադրելով նրա գաղափարները, որոնց առանձնահատկությունները բնորոշում են հեղինակի ողջ էությունը:

Բանաստեղծությունն ընկալելու և վերարտադրելու համար պետք է գիտակցել՝ ինչ է պոեզիան ընդհանրապես, քանի որ անհնար է որևէ բանաստեղծություն թարգմանելիս, որևէ բանաստեղծի ընտրելիս՝ անհրաժեշտ յուրովի մոտեցում հանդես չբերել: Յուրաքանչյուր անհատի կամ տարբեր նյութերի հանդեպ նույնանման մոտեցում չպետք է ցուցաբերել, օրինակ, որևէ պատմաբանի, տնտեսագետի, լեզվաբանի, գրականագետի և այլոց կողմից մշակված տեսական նյութերին, կամ գեղարվեստական արձակ երկերին թարգմանիչը նույն կերպ չի կարող մոտենալ, ինչ պոեզիային, ամեն բնագավառ ունի իրեն բնորոշ առանձնահատկություններ: Չժխտենք նաև, որ գիտելիքների պաշարը ևս խիստ անհրաժեշտ է թարգմանչին: Բանաստեղծության արտահայտած գաղափարների ու մտքերի մեջ թարգմանիչը եթե չթափանցի, չի կարողանա դրանք ճշգրտորեն վեր հանել, պետք է միավորվի հեղինակի զգացողությանն ու պատկերացումներին, որոնց շնորհիվ են արտադրվել գլուխգործոցներ, և թարգմանիչն այդ դեպքում միայն կվերարտադրի գրողի ներքին և միայն նրան հատուկ զգացումները, առանձնացնելով ու վերարտադրելով նաև համամարդկային զգացումներն ու հատկությունները ճշտորեն, որոնք հեղինակի բաղկացուցիչ մասն են կազմում: Թարգմանիչը պետք է ծանոթ լինի գրողի ժամանակակիցների արձանագանքներին, լինի գրաքննադատ, թե՛ ընթերցող: Փոխվում են ժամանակները, դրանց հետ նաև՝ ընկալումները, փոխվում է ճաշակը արվեստի նկատմամբ: Անհրաժեշտ է գրողի զգացողությամբ վերարտադրել անցած դարերի, ժամանակների գործերը և կարողանալ այսօր նոր արվեստագետի մտածողության կողքին վերստեղծել դրանք մեկ այլ լեզվում նույն շնչով: Անցած դարերի պոեզիան հասել է մեզ և դարձյալ հուզառատ պահեր է պարգևում ընթերցողին: Թվում է, ամեն ինչ պարզ է, բայց թարգմանիչը պետք է ավելի շատ հասկանա պատճառները, իմանա թե բանաստեղծը ինչ կենցաղային, սոցիալական, պատմական, անձնական բնույթի դժվարությունների միջով է անցել, հաղթահարե՞լ է, թե՞ ընկճվել, իր ժամանակի ո՞ր իրադարձությունների ականատեսն է եղել: Թարգմանիչը պետք է անցնի այն նույն ուղով, ինչ հեղինակը, պետք է ծանոթ լինի նրա ստեղծագործության անցած ճանապարհին, որպեսզի նույն կերպ տանի այլ լեզվով խոսող, այլ մտածողության, աշխարհայացքի տեր ընթերցողին՝ հաղորդելով բնագրի ողջ հմայքը՝ գաղափարական, ոճային, լեզվական կառուցվածքի, նորարարության արվեստի գործոնները: Դարերի խորքից մինչև մեր օրերը հասած գործերը, եթե ժամանակին ներգործություն են թողել հանրության վրա և առ այսօր չեն կորցրել թարմությունը, պատճառն այն է, որ գրողը

զգալ է տվել նույն համամարդկայինն խոհերն ու գաղափարները, որ առհավետ են իշխելու, որքան էլ տարբեր են ժամանակահատվածների առանձնահատկությունները: Հարցերից մեկն էլ այն է, որ պատմությունը պետք է տեսնել իր ժամանակի մեջ, քանի որ այն շարունակ փոխվում է, առաջ է ընթանում, բայց շատ խնդիրներ մնում են նույնը: Եթե հայոց ցավոտ հարցը մեկ դար անց դեռ ծեծվում է և վերջնական լուծում չի գտնում, ժամանակակից բանաստեղծը անդրադառնում է դրան նույնպես, բայց նորովի, որոշ մեկնաբանություններ այլևս բացահայտ չեն արտահայտվում, որովհետև դրանք քայլել են մեկ դար, մնացել է բուն բովանդակությունը և այսօր կարող է հանդես գալ այլաբանորեն, ոճական այլ արտահայտչամիջոցներով, իսկ եկող սերունդները պետք է միևչև ակունքները բարձրանան, որ հասկանան, ինչ են ուզել ասել, օրինակ՝ Վարուժանը, Սիամանթոն իրենց անկրկնելի բանաստեղծություններով, որ այսօր էլ հուզում են մեզ: Հնարավոր է նույն թեմայի շուրջ այօր այլաբանորեն գրված գործը հասու չլինի նրանց, ում անծանոթ է մարդկությանը պատուհասած եղեռնագործությունը, այս դեպքում թարգմանվող որոշ բանաստեղծություններ նույնպես չեն ընկալվի: Օրինակ, բանաստեղծությունների նման մի շարք է գրել մեր օրերի բանաստեղծուհի Սոնա Վանը մեկ դար առաջ տեղի ունեցած արհավիրքների մասին: Ժամանակակից օտար ընթերցողը, որն այսօր ծանոթ է հայոց հարցին, կարծում ենք կընկալի իր մայրենի լեզվով մատուցված բանաստեղծությունները, որոնց մատչելիությանը նպաստում է նաև ճիշտ ընտրված վերնագիրը՝

«ԱՊՐԻԼՅԱՆ ՄՂՁԱՎԱՆՋՆԵՐ» շարքից

...մի թափանցիկ կույս
հերարձակ ու մերկ
փախչելու պահին
անզգուշաբար
դիպչում է շողին
ու ընկնում ներքև

տասըձեռանի
տասնանդամանի
մի յաթաղան է
գերանդու նման
բարձրանում իջնում
ավազների մեջ
լուռ անապատի

Ապրիլը մոտենում է կրկին
երազներս լցվում են նորից
դեպի Արազը վազող աղջիկներով
երկարամազ

ապրիլը մոտենում է կրկին
անապատը շնչում է ինչպես
գազանը վայրենի
կրքի պահին

De la série "CAUCHEMAR D'AVRIL"

... Une vierge transparente
aux cheveux longs nue
en prenant la fuite
imprudemment
effleure une clarté
et elle fait une chute

un yatagan
à dix mains
à dix membres
pareil à une faux
monte puis descend
dans le sable
du désert muet

Avril arrive encore une fois
mes rêves de nouveau se remplissent
de jeunes filles aux cheveux longs
qui courent vers le fleuve Araz

avril arrive une nouvelle fois
comme une bête sauvage
entrée en chaleur
le désert respire

Յուրաքանչյուր ժամանակաշրջան ուրույն կերպով է ձևավորել իր արվեստագետներին և գրական գործիչներին, բանաստեղծներին: Պոեզիայի իսկական երկրպագուների համար մեծահամբավ բանաստեղծ-

ները ապրում են հարատև իրենց ուրույն դրսևորումներով, որովհետև, անկախ ժամանակի ներազդումներից, նրանք նախ և առաջ համամարդկային հույզեր են արտահայտել, որից հետո միայն պատմությունն ու իրադարձություններն են իրենց կնիքը թողել նրանց վրա: Իսկ այս ոլորտում մեծ է թարգմանչի ստանձնած դերը՝ խորությանբ ծանոթ լինելու այդ ամենին՝ ճիշտ մատուցելու համար:

Պոեզիան թե՛ ձևավորվող նոր ձևերի ու բովանդակության, թե՛ գաղափարական նորանոր արտահայտումներով, ամենից առաջ գեղագիտական դրսևորում է:

PHEDRE

Ah! douleur non encore éprouvée!
A quel nouveau tourment je me suis réservée!
Tout ce que j'ai souffert, mes craintes, mes transports,
La fureur de mes feux, l'horreur de mes remords,
Et d'un refus cruel l'insupportable injure,
N'était q'un faible essai du tourment que j'endure.
Ils s'aiment! Par quel charme ont-ils trompé mes yeux?
Comment ce sont-ils vus? Depuis quand? Dans quel lieu?
... Ի՜նչ նոր ցավեր ստեղծեցին ինձ համար,
Ի՜նչ նոր վշտի տիրացա, նոր հոգսերի՝ անհամար,
Բայց որքան էլ տանջվեցի և զգացի ահ ու ցավ,
Սիրո հրում այրվեցի, խղճիս խայթը արթնացավ,
Անգթաբար մերժվեցի, այպանվեցի խստորեն,
Այս ամենը շատ թույլ են նոր մորմոքիս փոխարեն:
Նրանք սիրում են իրար և սիրում են գաղտնապես,
Բայց ե՞րբ տեսան մեկ-մեկու, ո՞ր վայրերում, կամ ինչպե՞ս:

Այս հատվածը քաղված է Ռասինի «Ֆեդրա» ողբերգությունից, որը պատկանում է կլասիցիզմի գրական ուղղությանը: Վերջինս բացարձակ միապետության պայմաններում բազում կենցաղային թեմաներով և ոճով արտադրված վեպերի, բուռլեսկային գրականության բովանդակությունն ու ձևը իսպառ փոխեց, նոր կարգավիճակ առաջացավ և նորամուծություն բերեց գրականությանը, կարգ ու կանոն սահմանեց գեղարվեստական ստեղծագործության մեջ՝ հստակություն, ճշգրտություն, բովանդակության համաչափություն, ներդաշնակություն արարելով: Այս ամենը «Անխախտ օրենքների» սահմանումներ դարձան:

Այնուամենայնիվ, գրական այս ուղղությունը կապանքներ դրեց գրողի մտածողության վրա, կաշկանդեց գաղափարների հորդացումը և ծավալի մեջ գործելու ազատ հնարավորությունը: Բայց չի նշանակում, որ թարգմանիչը պետք է մեր օրերի համար այդ խորթ կապանքները փորձի փշրել և կլասիցիզմի ժանրում կերտված հերոսներին, այսօրվա պահանջներից ելնելով, խոսեցնի մեր լեզվով, քանի որ այսօրյա ընթերցողը վերոհիշյալ պահանջներից հեռու է կանգնած, այս առումով թարգմանիչը տեղյակ լինելով, թե ինչ է պահանջվում իրենից, թոթափում է իր նախասիրությունները և տեղափոխվում է Ռասինի դարաշրջանը, գնահատում, մտորում և խոսում է նրա նման, չի անտեսում ժանրային առանձնահատկությունները: Նույնիսկ ձևի մեջ կամային շտկումներ չի կատարում: Սակայն որոշ հանգամանաքներում թարգմանիչն ստիպված և գիտակցաբար կատարում է որոշ փոփոխություններ՝ նպատակ ունենալով երկի ընդհանուր շունչը և ոգին ապահովել: Օրինակ, ֆրանսերենում ալեքսանդյան տասնվեց վանկանի բանաստեղծական տողը, երկու ներքին հատածներով (վեց և վեց), հայերենում վերածվել է տասնչորս վանկանի տողի՝ յոթ, յոթ հատածներով և սրանք էլ իրենց հերթին՝ չորս, երեք հատածների: Այնինչ, ներքին վեց վանկերը ֆրանսերենում կարող են տատանվել, որովհետև դրանից ընդհանուր մեղեդայնությունը չի խախտվում, ինչպես հայերենում, ռիթմիկ խումբը չի փոխվում: Պաճառն այն է, որ ֆրանսերենի բառերն ավելի կարճ են, վանկերն ավելի սակավ՝ համեմատած հայերենի հետ: Այս փոփոխությամբ բնագրի պես հոսուն է դառնում ընդունող լեզուն:

Յուրաքանչյուր բանաստեղծի և թարգմանչի համար ստեղծագործական աշխատանքը ներքին զգացողություն է, բնական պոետական պոռթկում ու եռանդ, որից հետո միայն կժայթքի արարումը և կհանձնվի հանրությանը: Անհնար է այս գործընթացներն անտեսել կամ առաջացած ստեղծագործությունը սխոլաստիկական սխեմաների, քարացած ձևերի մեջ սահմանափակել: Որպեսզի թարգմանիչը կարողանա ընկալել բանաստեղծության էությունը, ավելի նրբորեն զգա բանաստեղծի հոգին, պետք է հասնի նրա ակունքներին, այնուհետև՝ գագաթին, հայտնաբերելու համար բանաստեղծի աշխարհը: Սակայն տարբեր հեղինակների հանդեպ թարգմանչի վերաբերմունքը տարբեր է լինելու, ինչպես նաև՝ տարբեր գրական ժանրերով ստեղծված գործերի կամ տարբեր անհատների ստեղծագործության հանդեպ:

Նախ և առաջ, բանաստեղծի զգացողությունը, ոճական առանձնահատկությունները, արտահայտման միջոցները թարգմանիչն իրեն ենթարկեցնելուց հետո, հարազատորեն փոխանցում է, մինչև իսկ հեղի-

նակին բնորոշ քմաճույքները, չանտեսելով ու չվերամշակելով դրանք: Նա հմտորեն կարողանում է այդ հրաշագործի՝ բանաստեղծի մեջ ամփոփված մարդկային հատկանիշները սեփականացնել արվեստագետի զգացողությամբ ու զորեղությամբ: Քանի որ բանաստեղծն իր զգայարաններով է կյանքից վերցնում իր էությանը հարիր երևույթները, միացնում է իր մտորումներին, քաղում է տիրող իրավիճակները, շրջապատող դեմքերը, արտահայտությունները, վերցնում է բնությունից այն ամենը, ինչ հարազատ է իրեն՝ ծառից, քամուց, քաղաքից, ձայնից կամ աղմուկից, շուրջը թափառող համ ու հոտից...: Բայց մեքենայաբար չի վերցնում, բնազդորեն գիտի, ինչն է իր էության մասը կազմում: Եվ իր կյանքը, էությունը, գեղարվեստական հնարներով համեմված՝ հանձնում է հանրությանը: Իր զգացմունքները, հիշողությունը, կրքերը դնում է նժարին՝ ժամանակի, մահվան ու ծննդի միջև:

Տեղափոխվելով ռոմանտիզմի դարաշրջանը, նկատում ենք ժանրային այլ մոտեցումներ: Ռոմանտիզմի շրջանի բանաստեղծություններում առկա են երազանքը, պատմողական ազատ խոսքը, որոնք համեմված են հարուստ բառապաշարով, արտահայտություններն արդիական են, դրանք կրում են նաև իմաստասիրական մտքեր, բովանդակության առումով կապված են անմիջական կյանքի հետ, առատորեն հանդես եկող նկարագրությունները լրացնում են նրանց ասելիքը և շեշտում են իրենց կերտած կերպարների ներքին աշխարհը, նորաբանություններ են ստեղծվում հենց իրենց՝ հիղինակների կողմից, իրենց միջավայրից, կյանքից են ընտրում հերոսներին, ժամանակակից պատմական և կենցաղային իրադարձություններն են վերցնում և ստեղծագործության մեջ դարձնում անմիջական միջավայր: Այսպիսով, տարբեր ժանրային գրականություն փոխանցելիս մի այլ լեզվի, թարգմանիչը կլասիցիզմից, օրինակ, ցատկ է կատարում է և մուտք է գործում այլ դրսևորումներով ու ժանրերով արտահայտված գրական ուրիշ միջավայր, այս դեպքում փոխվում է նրա գրչի վարգը: Հիմա նա ռոմանտիկ բանաստեղծ է և խոսում է այդ բանաստեղծի լեզվով ու ոճով, լեզվական, ոճական նույն հնարներով, դառնում է նույն իմաստասերը, նույն հարուստ բառապաշարի կրողը, նույն կերպ մտածողը:

Lorsque du créateur la parole féconde
Dans une heure fatale eut enfanté le monde
Des germes du chaos,
De son oeuvre imparfaite il détourna sa face,
Et, d'un pied dédaigneux le lançant dans l'espace,
Rentra dans son repos.

Երբ արարչական խոսքը վարարած
Չարաղետ ժամի աշխարհն արարեց
Քաոսի սերմից,
Անկատար գործից երեսը շրջեց,
Ոտքով շպրտեց անեզրության մեջ,
Խաղաղվեց նորից

Սա ապացուցում է, որ թարգմանչի տիեզերքն արդեն փոխվել է: Նշված հատվածում Լամարթինն է իր զգացմունքներով, մեղեդայնությամբ, թախիծով՝ «Վհատություն» պոեմում, ուր պարզորոշ տեսնում ենք բանաստեղծի խոհերը որպես ռոմանտիկ բանաստեղծի: Եվ թարգմանելիս բավական չէ ստեղծագործության մեջ բառի համար ճշգրիտ համարժեր գտնել, պետք է նրանում ներդնել նաև երաժշտականությունը, երազանքը, վիշտը, զգացմունքը, այն ամենը, ինչ բնագրում բնորոշում է բանաստեղծին և ռոմանտիզմին:

Լինում է մի պահ, երբ մտածում ենք, թե ամեն մարդ էությամբ բանաստեղծ է և ակամա հենվում ենք Լոթրեամոնի արտահայտած այն մտքի վրա, թե բանաստեղծություն բոլորն են կերտում, այն չի ստեղծվում մեկ հոգու կողմից: Եվ այս միտքը մեզ մտորել է տալիս այն մասին նաև, որ բանաստեղծը համայն տիեզերքի մասնիկն է, նաև՝ կենդանի, իրական մշակույթի տերը և կրողը: Գրական մեկնաբանը, ով վերլուծում է բանաստեղծությունը, ինչպես օրինակ, Ժորժ Մունենը՝ Ալֆրեդ դը Մյուսեի, Ռընե Շարի գործերն ու նրանց անհատականությունը կամ Մարսել Պրուստը, որ մտքեր է արտահայտում Ռասինի մասին իր հայտնի գործերից մեկում, նաև շատ ուրիշ գրաքննադատներ, նույնպես բանաստեղծ են: Այս առումով նրանց և թարգմանիչների դերն ուզում ենք ինչ-որ չափով նույնացնել, որովհետև երկուստեք մեկնաբանում են գործը՝ խորությամբ ընկալելուց հետո, սակայն տարբեր մոտեցումներ հանդես բերելով: Եվ վերջապես ժան Ժիոնոն գալիս է իր մտքերով հաստատելու վերոհիշյալը, վստահորեն նշելով, որ յուրաքանչյուր անհատի մեջ նստած է բանաստեղծը, օրինակ, գեղջուկն իր բնույթով անմիջական կապի մեջ է բնության հետ. հողի, ջրի, ծառ ու ծաղկի, քամու, բաց երկնքի հետ: Այս ամենը բանաստեղծություն է և բանաստեղծ է ծնում: Հեքիաթասացները, լեգենդներ, առասպելներ տարածողները՝ բանավոր թե գրավոր խոսքով, բանաստեղծական շնչով, ներդնում, ավելացնում են իրենց մտահղացումները հնուց հասած ասքերի, լեգենդների, ժողովրդական ավանդապատումների մեջ, նոր երանգ են հաղորդում բանավոր ստեղծագործությանը, և այս ամենը փնջողները, որ կոչումով բանահավաքներ են և գործընկերներն են «ասողների», նույնպես ստեղ-

ծագործող են, քանզի մի ծիլ անգամ, որ ավելացնում են նրանք, զարգացնում են գործը: Ուրեմն, սրանք ևս բանաստեղծ են: Նաև մնացած բնագավառներում գործողները, որ ինչ-որ բան արարում են՝ բանաստեղծ են: Թարգմանիչը նույնպես իր գործունեության ընթացքում թռչելով դարերի վրայով, մի տեղ դադար է առնում, որովհետև նկատել է այն հեղինակին, որի հետ միասնություն է կազմելու, նույնպես բանաստեղծ է:

Պոեզիան երբեք չի անհետանա մարդկության կյանքից, որովհետև այն հավերժորեն է պատկանում մշակույթին, որովհետև գաղտնիքներ, առեղծվածներ է պարփակում իր մեջ, իսկ մարդ միշտ ծարավի է դրանք պարզաբանելու, պոեզիան նաև ձև ու բովանդակություն ունի, որ ներմուծում է յուրաքանքանչյուրի գիտակցության մեջ՝ մարդու և կյանքի միջև գոյանալով: Պոեզիան ապրեցնում, վերապրեցնում է մահացած սերը, ոչնչացնում է մահը, որովհետև բանաստեղծն իր գործով ապրում է՝ շարունակելով կյանքը ուրիշ կյանքի մեջ, նա անմահ է: Բանաստեղծությունը կյանք է:

Սակայն, ինչպես նշեցինք, պոեզիան նույնպես ընդգրկված է տարբեր ժանրերում, երբ երկը մի լեզվից մյուսին ենք փոխանցում, պետք է նկատի առնել հեղինակային առանձնահատկությունները: Գրական ժանրերը, մեկը մյուսի շարունակությունը կազմելով, ժառանգում են նախնիների խոսքի և մտածողության առանձնատուկ գծերը, ինչպես մեր նշած և գալիք այս բանաստեղծությունից քաղված հատվածում Եվ բոլոր հանրահայտ ձայների մեջ թրթռում է մեն-միակ, հատուկ մի լար ու հնչերանգ, ինչպես Իսկուհի Մինասի այս բանաստեղծության մեջ: Դա նրա ձայնն է, որ տարբերվում է բոլորից: .

Cette musique, là-bas, d'une grande salle obscure, lourde de l'ennui qui montait de nous-mêmes, cette musique qui fut comme le lent supplice d'une heure où je lus l'arrêt dans tes yeux pour la joie d'amour, je l'entendais hier, si pleinement détachée de tout ce qui me fis esclave de ton joug, que la présence soudaine ne meût arraché ni pleurs, ni frisson...

Այնտեղ մթին մեծ սրահից այս մեղեդին խոր ծանծրույթով բռնավորված, որ մեզնից է լուռ համբառնում, այո մեզնից, այս մեղեդին, որը դարձավ դանդաղ տանջանք այն պահից, երբ քո աչքերում ես կարդացի բաժանումը մի երկնի տակ, որ կերտված է բերկրանքով լի սիրո համար, երեկ նորից լսում էի՝ ամբողջովին ծերբազատված ամեն ինչից, որ ինձ դարձրեց լծիդ գերին, ու թե հանկարծ հայտնվեիր, ոչ արտասուք, ոչ էլ սարսուռ չէր խլելու անձդ ինձնից:

(Իսկուհի Մինաս, «Շունչը»)

Երաժշտական ելևէջները, մեղեդայնությունը խթանում են զգացմունքների դրսևորումը, համայն մարդկության կյանքի մաս կազմելով հանդերձ, նաև միակն են՝ մեն միակ հոգու սեփականությունը: Մեջբերված հատվածում ներկա է այս ամենը: Ներկա է երկինքը անցած բերկրանքի և սրտի տվայտանքի դիմաց: Բառերով կերտվել է մի ողջ սիմֆոնիա, մեղեդի, ներդաշնակություն, երգ ու երաժշտություն: Իր հերթին, թարգմանիչը փնտրել ու գտել է նույն ներդաշնակությունը, նույն երգը, նույն մեղեդին և ծուլել է դրանք միևնույն երաժշտության մեջ, ինչ բնագրում: Ստացած տպավորությունները, վերագտած զգացումները հնչում են համարժեք հնչերանգներով այլ լեզվի մեջ: Այդ հնչերանգները զգացմունքներն են: Երբ երաժշտությունը՝ նուրբ կամ բուռն, անակնկալի է բերում հոգու ներսում գտնվող խմբավարին (նախ՝ բանաստեղծին, այնուհետև՝ թարգմանչին), հույզը հարկադրում է միահեծան իշխել: Այնուհետև զգացմունքը թրթռում է ողջ սրությամբ, խտությամբ, այրում և ի վերջո սպառում է եռանդը, հուզավառությունը տակնուվրա է անում ներքին ամեն տեսակի հավասարակշռություն, և այն մոխրի միջից, որ անթեղված էր բանաստեղծի հոգում, վերածնվում է նույն պատկերով և նույն ապրած սիրով այլ լեզվի սահմաններում:

Ուրեմն, սերը պոեզիա է: Ինչպես Ռեմբոն էր ասում՝ սերը պետք է վերստեղծել, նորից հորինել: Կարծես այս միտքը վերաբերում է նաև թարգմանչաց արվեստին: Տիեզերական ողջ պոեզիան այս միակ թեմայի տարբերակների շարունակականությունն է: Ուրեմն, սերը և պոեզիան ընդհանրանում են, քանզի երկուսն էլ հավերժող են, արարում են:

Պոետական յուրաքանչյուր վիճակ երևում է փոփոխուն տարբերակների վրա կանգնած, որ սերում են թախծից, տառապանքից, տխրությունից, մելամաղձից, հուսահատությունից, ինչպես նաև հականիշ հատկանիշներից՝ բերկրանքից, ուրախությունից, երջանկությունից, ջերմ հոգու բռնկումից: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ սոսկալի կերպով հասցրած վերքը, ամենաահավոր դաժանությունը բանաստեղծության մեջ հասնում են ավելի մեծ կատարելության, և պահանջ ունեն արդարացվելու: Ինչպես որ չենք ժխտի, այն փաստը, թե բանաստեղծի բերկրանքը անցնելով սահմանը, ձգտում է հասնել կատարելության: Եվ բանաստեղծի բերկրանքը սահմաններից դուրս գալով՝ արդարացնում է մարդկության ուրախությունն ու տառապանքը, հանդես գալով սպառման կամ խտացման որոշ աստիճանի վրա: Հարկ կա՞ մեկ անգամ ևս հիշեցնել, ինչպես պետք է թարգմանիչը պահպանի պոեզիայի վերոհիշյալ հատկանիշները մեկ այլ լեզվում: Ռընե Շարը կհասնի մեզ օգնության ներկայացնելով բանաստեղծին իր ողջ էությամբ: Եվ ո՞վ ավելի

լավ կներկայացնի պոեզիան և բանաստեղծին, եթե ոչ ինքը՝ բանաստեղծը: Ուրեմն, խոսքը տանք դարիս մեծ բանաստեղծ Ռընե Շարին, ով կխոսի մեզ հետ ֆրանսերեն, ինչպես նաև՝ հայերեն.

Le poète s'appuie, durant le temps de sa vie, à quelque arbre, ou mer, ou talus, ou nuage d'une certaine teinte, un moment, si la circonstance la veut. Il n'est pas soudé à l'égarement d'autrui. Son amour, son saisir, son bonheur ont leur équivalent dans tous les lieux où il n'est pas allé, où jamais il n'ira, chez les étrangers qu'il ne connaîtra pas…

Կյանքի ընթացքում պոետը հենվում է ինչ-որ մի ծառի կամ ծովի, կամ հողաթմբի, կամ ինչ-որ գույնի մի ամպի, մեկ վայրկյան միայն, թե հանգամանքը այդպես կամենա: Ուրիշի մտամոլորմանը երբեք չի ծուլվում: Նրա խռովքը, սերն ու բերկրանքը համարժեք ունեն բոլոր տեղերում, ուր չի գնացել, չի գնա երբեք, օտարների մոտ, որ չի ճանաչի:

Բանաստեղծն, ուրեմն, այն մարդն է, որ ժամանակի հանդեպ սուր զգացողություն ունի: Կարող ենք բանաստեղծության միջոցով ընկալել մարդկության առջև ծառացած այն բոլոր մեծ խնդիրների ցանցը, որ ժամանակն է առաջարկում. ժամանակը և հավերժությունը, մարդկության ժամանակը և բնության ժամանակը, երևակայության ժամանակը, ժամանակը և ճակատագիրը: Այս ամենը բանաստեղծին դարձնում է մարդ մարդկանց միջավայրում: Իսկ նրա թարգմանիչն այդ պահերին՝ նրան ձուլված, դառնում է նույն մարդը:

Մի բան հավաստի է, որ պոեզիան գիտություն չէ: Այն հնարավոր չէ ավանդել, սովորեցնել, ինչպես ստեղծելու երևույթը անհատի դեպքում (բանաստեղծ թե թարգմանիչ): Բարձրագույն, թե միջնակարգ ուսումնական հաստատություններում դասախոսի կամ ուսուցչի կողմից մատուցվող առարկա չէ: Բանաստեղծ ծնվում են: Ինչ վերաբերում լավ կամ վատ բանաստեղծությանը, դա ևս ծնվում է բանաստեղծի հետ և դառնում չափանիշ այլոց համար:

Այն բանաստեղծությունները, որ մեծ հաջողություն են ունեցել իրենց ժամանակի մեջ, չեն մաշվում երբեք: Իսկ լավ թարգմանությունները նույնպես արժանի են անմահության: